Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ հետևյալ հղմամբ:

Արժեթղթերի պահառուական ծառայություններ

Ծառայություն		Սակագին *
Արժեթղթերի հաշվի բացում, փակում		Անվճար
Արժեթղթերի պահպանում[1]		0.08%
Արժեթղթերի փոխանցում [2,3]	**Բաժնային արժեթղթերի փոխանցում (DVP/FOP/ST)** [4]	0.15%, նվազ. 10,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ
	Ոչ բաժնային արժեթղթերի փոխանցում (DVP/FOP/ST)[4]	0.015%, նվազ. 5,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
	Այլ արժեթղթերի փոխանցում (DVP/FOP/ST) [4]	0.25%, նվազ. 10,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ
	Բաժնետոմսերի ներբանկային փոխանցում [4]	0,08%, նվազ. 5,000 ՀՀ դրամ
	Պարտատոմսերի ներբանկային փոխանցում [4]	0,008%, նվազ. 3,000 ՀՀ դրամ
	Այլ արժեթղթերի ներբանկային փոխանցում [4]	0,1%, նվազ. 8,000 ՀՀ դրամ
	Պորտֆելի փոխանցում[5]	6,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի գրավադրում	**Բաժնետոմսերի գրավադրում**	0,06%, նվազ. 5,000 ՀՀ դրամ
	Պարտատոմսերի գրավադրում	0,01%, նվազ. 1,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի հաշվի սառեցում		0,05%, նվազ. 5,000 ՀՀ դրամ
Կորպորատիվ գործողություններ		Անվճար
Տեղեկանքի, քաղվածքի տրամադրում		Անվճար
Ոչ ստանդարտ[6] **տեղեկատվությամբ տեղեկանքի տրամադրում**		10,000 ՀՀ դրամ
Այլ պահառուական ծառայություններ[7]		Արդշինբանկի պահառուական ծախս + 25% հավելագին

[1] Սակագին չի կիրառվում ՀՀ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող կամ ՀՀ Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթերի կամ հրապարակային ֆոնդի փայերի, սվիփ գործարքի արդյունքում ձեռք բերված Դրամական շուկայի ներդրումային ֆոնդի փայերի (money market funds) վրա պահպանման դեպքում:
Պահպանման սակագնի հաշվարկի հիմք է վերցվում արժեթղթերի շուկայական արժեքը, եթե այն ավելի փոքր չէ անվանական արժեքից: Հակառակ դեպքում հիմք է վերցվում անվանական արժեքը:

Հաշվարկի համար հիմք է ընդունվում հաշվետու ժամանակահատվածի յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ հաշվետիրոջ հաշվում առկա արժեթղթերի մնացորդները՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ փոխարժեքը:

[2] Փոխանցման սակագինը չի գանձվում, երբ
- արժեթղթեր փոխանցող/ստացող կողմ է հանդիսանում ՀՀ Կենտրոնական Բանկը,
- փոխանցումը կատարվում է հաճախորդի կողմից ներկայացված բրոքերային պատվերի շրջանակներում,
- ՀՀ պետական պարտատոմսերի փոխանցումը կատարվում է ՀՀ ԿԲ համակարգի ներսում:

[3] Հաշվարկը կատարվում է Արժեթղթերի՝ հաշվին փաստացի մուտքագրման/ելքագրման օրը՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով Բանկի անկանխիկ առքի փոխարժեքը:

[4] Հաշվարկի հիմք է վերցվում արժեթղթերի շուկայական արժեքը, եթե այն ավելի փոքր չէ անվանական արժեքից: Հակառակ դեպքում հիմք է վերցվում անվանական արժեքը:

[5] Կիրառվում է միայն ՀԿԴ հաշվի այլ օպերատորի մոտ բացված հաճախորդի հաշվին փոխանցման դեպքում:

[6] Ոչ ստանդարտ է համարվում Արդշինբանկ ԲԲԸ կողմից հաստատված տեսքով և բովանդակությամբ փաստաթղթերից տարբերվող ցանկացած այլ տեսքով և բովանդակությամբ փաստաթուղթը:

[7] Սակագին չի կիրառվում արժեթղթերից ստացվող եկամուտների հաշվին մուտքագրման, արժեթղթերի մարման և շահութաբաժինների վճարման դեպքում:

* Սակագները գանձվում են ՀՀ դրամով:

Կայքում հրապարակված Սակագները տարածվում են իրավաբանական անձ հաճախորդների վրա, որոնց 50 տոկոս և ավել բաժնետերերը կամ փայատերերը չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի, կամ որոնց վերջնական շահառուների 50 տոկոսից ավելին չեն հանդիսանում այլ երկրի քաղաքացի:
Նշված սակագները չեն վերաբերվում ֆինանսական կազմակերպություններին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով (բացառությամբ վարկային, վճարահաշվարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների): Այդ կազմակերպությունների համար սակագները սահմանվում են «Արդշինբանկ» ԲԲԸ և ֆինանսական կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

Այլ պայմաններ

Արժեթղթերի պահառուական ծառայությունների մատուցման պայմանները, այդ թվում՝ ծառայության շրջանակում Բանկի և հաճախորդի միջև պայմանագրի կնքման և դադարեցման կարգն ու ժամկետները, հաճախորդի կողմից վճարումների իրականացման պայմանները, ժամկետներն ու եղանակները, Բանկի կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, գործարքների կնքման նպատակով հանձնարարականների ներկայացման և կատարման ընթացակարգը, քաղվածքների/հաշվետվությունների (դրանց կրկնօրինակի) և այլ տեղեկատվության տրամադրման պայմանները և ժամկետները, Արժեթղթերով գործարքի իրականացման վայրերը, պարտավորությունների կատարման ժամկետները, պայմանները և դրանց չպահպանման դեպքում հնարավոր հետևանքները, ինչպես նաև շահերի բախման կանխարգելման վերաբերյալ և այլ համապատասխան դրույթներ ներկայացված են Բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների 12-րդ և 13-րդ գլուխներում:

Կարևոր է իմանալ

➢ Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» (Know Your Customer) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում):

➢ Օտարերկյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքված համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

➢ Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Արդշինբանկ» ԲԲԸ հետ ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

«Արդշինբանկ» ԲԲԸ մատուցում է արժեթղթերի պահառուական ծառայություններ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունված պահառության գործունեությունը կարգավորող կանոնակարգերով, կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով Հաճախորդին պատկանող արժեթղթերի պահպանությամբ և արժեթղթերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառմամբ և փոխանցմամբ: Արժեթղթերի պահառուական ծառայության մատուցման շրջանակներում Բանկն իրականացնում է դեպո հաշիվների բացում, արժեթղթերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցում, փոխպանցման, գրավադրման, արգելադրման և այլ հանձնարարականների ընդունում և կատարում, հաշվի մնացորդի և շարժի վերաբերյալ քաղվածքների և տեղեկանքների տրամադրում, ինչպես նաև արժեթղթերի պահառությանն առնչվող այլ գործառնություններ:

Բանկը մատուցում է նաև հեռահար սպասարկման ծառայություն, որին կարող եք ծանոթանալ ***հետևյալ*** հղմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ! ՏՎՅԱԼ ՆՅՈՒԹԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԳՈՎԱԶԴ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից